

**ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2020թ.


Բովանդակություն

	Էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Գործունեության մասին հաշվետվություն	7
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

30.06.2021թ.
N 022117

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ
Գլխավոր տնօրեն
Ծ. Պետրոսյան



Աուդիտորական ծառայությունների իրականացման
Լիցենզիա արժիվ ԱՕ-054՝ տրված ՀՀ ֆինանսների
և Էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ-ի
Խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիա ՀԿ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Կազմակերպության՝ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՄ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՄԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

Հանգամանքի լուսարանում

Կազմակերպության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, որը 2020 թվականի ապրիլի 23-ին տրված եզրակացությամբ արտահայտել է չձևավորված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՄ-երի համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանք՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացվող աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- Ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Կազմակերպության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

ADVISORY • ASSURANCE • ACCOUNTING • TAX

Baker Tilly Armenia CJSC is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

▪ Եզրահանգում ենք անում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյո՞ք առկա է դեպքերի կամ իրավիճակների առնչությամբ էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռքբերված աուդիտորական ապացույցների վրա: Մակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

▪ Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

▪ Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Կազմակերպության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Կազմակերպության աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Ի թիվս այլ հարցերի, կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդակից ենք դարձնում աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակինու ժամկետներին, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերին՝ ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունները:

Աուդիտոր

Ա. Կարապետյան




30.06.2021թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱՎԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Մանրագրություններ	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	170,972	183,799
Ոչ կյուրակական ակտիվներ	5	7,594	307
Ներդրումներ կապակցված կազմակերպություններում		13	13
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		178,579	184,119
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		-	133
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	6	908	43,407
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	7	6,503	7,740
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		7,411	51,280
Ընդամենը ակտիվներ		185,990	235,399
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	27,113	29,422
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	18,166	20,653
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		45,279	50,075
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	10	594	42,144
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	14,722	9,149
Շահութահարկի գծով պարտավորություն		15	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		15,331	51,293
Զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		(60,873)	(52,222)
ՀՄ վերազնահատման պահուստ		186,253	186,253
Ընդամենը զուտ ակտիվներ		125,380	134,031
Ընդամենը պարտավորություններ և զուտ ակտիվներ		185,990	235,399

Նախագահ՝
Կարեն Զադոյան
30.06.2021թ.



Հաշվապահ
«Իատալաբ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝
Արմեն Պետրոսյան

**ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	Ծանոթա գրություններ	2020թ.	(հազար դրամ) 2019թ.
<i>Եկամուտ</i>			
Շտրիններից եկամուտ	12	35,904	557,126
Անդամավճարներ		706	196
Ծառայությունների մատուցումից եկամուտ		6,843	-
Այլ		11	11
Ստացված շահաբաժիններ		-	1,398
Ընդամենը եկամուտ		43,464	558,731
<i>Ծախսեր</i>			
Հատուցումներ աշխատակիցներին		(20,466)	(91,171)
Դրամաշնորհ		(14,783)	(446,647)
Մաշվածություն և ամորտիզացիա		(13,336)	(20,656)
Ծրագրի սպասարկման ծախսեր		(545)	(6,452)
Կոմունալ և կապի գծով ծախսեր		(1,302)	(3,315)
Գրասենյակային ծախսեր		(4,771)	(3,449)
Այլ ծախսեր		(215)	(1,081)
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		1,009	(4,261)
Ընդամենը ծախսեր		(54,409)	(577,032)
Արդյունք մինչև հարկումը		(10,945)	(18,301)
Շահութահարկի գծով փոխհատուցում	13	2,294	6,929
Տարվա արդյունք		(8,651)	(11,372)

**ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
 2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	Վերագնահատման պահուստ	Կուտակված արդյունք	(հազար դրամ) Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2019թ.	186,253	(40,850)	145,403
Տարվա արդյունք	-	(11,372)	(11,372)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2019թ.	186,253	(52,222)	134,031
Տարվա արդյունք	-	(8,651)	(8,651)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2020թ.	186,253	(60,873)	125,380

**ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

(հազար դրամ)

	2020թ.	2019թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք	(8,651)	(11,372)
Ճշգրտումներ		
Մաշվածության, ամորտիզացիայի ծախս	13,336	20,656
Շնորհներից եկամուտ	(35,904)	(557,126)
Շահութահարկի գծով փոխհատուցում	(2,294)	(6,929)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(1,009)	4,261
Գործառնական արդյունք նախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	(34,522)	(550,510)
Դեբիտորական պարտքերի և կանխավճարների նվազում	42,492	25,095
Պաշարների նվազում/(աճ)	133	(133)
Կրեդիտորական պարտքերի (նվազում)/աճ	(41,550)	38,390
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցներ	(33,447)	(487,158)
Ստացված նվիրատվություններ	38,990	196,034
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	5,543	(291,124)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(7,796)	(4,857)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(7,796)	(4,857)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ նվազում	(2,253)	(295,981)
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների վրա	1,016	(4,261)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում	7,740	307,982
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում	6,503	7,740